ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ՋՈՐՋ ԲՈՒՇԻՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՏԻԱՐ ՋՈՐՋ ԲՈՒՇԻՆ

ԱՄՆ, Վաշինգտոն

Խորապես վրդովված ենք Ամերիկայում աննախադեպ հանդգնությամբ կատարված ահաբեկչության դեպքերից: Ձեր և Ամերիկայի բարեսեր ժողովրդի հետ մեծապես ցավում ենք ողբերգության հազարավոր զոհերի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և համայն հավատացյալ հայության անունից Մեր վշտակցությունն ենք հայտնում Ձեզ, Ամերիկայի ողջ ժողովրդին և մասնավորաբար՝ անմեղ զոհերի ընտանիքներին ու հարազատներին: Հայցում ենք Բարձրյալից, որ Իր օրհնության ներքո անփորձանք ու ապահով պահպանի Ամերիկայի ասփվածասեր ժողովրդին, զորակից լինի հաղթահարելու վիշտն ու դժվարությունները և պահպանի այն արժեքները, որոնցով հպարտ է Ամերիկան:

Թող Ողորմածն Աստված խաղաղության ու լույսերի մեջ ընդունի զոհվածների հոգիները և Սուրբ Հոգու զորությամբ մխիթարություն պարգևի նրանց սգացյալ հարազատներին:

Մեծարգո Նախագահ. առաջիկա կիրակի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, եպսրբազան Պապարագի, կկատարվի հոգեհանգստյան արարողություն՝ ահաբեկչության զոհերի հոգվոց հանգստության համար:

Մշտառաք աղոթք և օրհնություն զոհվածների շիրիմներին և հոգիներին:

Վշտակցությամբ աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

***

Գարեգին Բ Կաթողիկոսը ցավակցական հեռագրեր է հղել նաև Նյու Յորքի և Վաշինգտոնի քաղաքապետերին: